ցից, զոր բերել էր վասն նոցա: Եւ սկսաւ զամենայն հնուտ և զքաջ պատերազմող արքն ի ճակատամարտին կացուցանել. և ինքն չինէր զճակատն: Եւ յորժամ կացոյց զզօրքն կարգ կարգ միմեանց յետ, ապա հրամայեաց ըզհրեղէն զէնս յառաջ բերել, այսինքն՝ որ կոչին Թօբք. և էր Թուով 16 մեծագոյնք. և հաստատեաց ընդդէմ զօրացն Տեսբոթին: Եւ հարին զԹօբերն միում նուագին. և ոչ ինչ վնասեաց նոցա բնաւին, այլ էանց ի վերայ նոցա. վասն զի այս անօրէնն ի վերայ բլրին էր զօրովք իւրովք, և Տեսբոթն ներքեւ բլրին. վասն որոյ չի վնասեաց նոցա ոչինչ. զի Տէր ընդ նոսա էր: Եւ ի նոյն ժամն յաւել եւս երկրորդումն լնուլ զԹօբերն, նոյնպէս և եր-

Որք ի կանանց խիստ հեռացան,
Ի յայլ քաղաք բնակեցան:
Ո՞վ է տեսել այսպէս խեղճ բան.
Վա՜յ և եղուկ հազար բերան:

Ո՛վ անիրաւ չար Թագաւոր,
Թող դու լինիս գըլուխ ի կոր.
Քո մեծութիւնդ լինի խոտոր
Որ Հայոց ազգն արեր մոլոր:

Բնաւ դու չես միղադրելի,
Ո՛վ արքանեակ սատանայի.
Աստուած երկրի մի՛ բարկացի՛
Զար Թագաւոր յայանի լինի:

Ի մեր անքաւ գործոց չարեաց՝
Ցասումն եռաւ Հայոց ազգաց,
Իւր սուրբ մարմինն ոչ խնայեաց
Եւ արկանել ներքոյ ոտաց:

Առաջ իւր սուրբ ոտնըն մաննեաց,
Ըզսուրբ մեռոնն յերկիր ցրուեաց.
Զիւր սուրբ գրեանքն հրով այրեաց,
Զեկեղեցի հիմնէ 1 չըջեաց:

Եկեղեցին քար և կիրէ,
Եւ իւր անօթք ի յայլ նիւթէ,
Եւ սուրբ գրեանքն պէսպէս նիւթէ 2,
Խաչ և ըսկիք ի արծաթէ,

Բերան չունին որ բամբասեն,
Ոչ ձեռք և ոտք որ մեղանչեն.
Վասն մեղաց մարդկան որ են՝
Ցոյցըս մարդկան պատիժ կըրեն:

ԶՀայոց ազգըն դառըն մատնեաց
Ի ձեռն արանց բռնաւորաց.
Ի հաւատոյ վերինք ըըրկեաց,
Ծարը նախատինք արար դըրացեաց.

Աստուած փրկէ ի յայլ չարէ,
Այլ մեծամեծ 3 պատուհասէ.
Ի յաշխարհիս Թէ չարչարէ՝
Անանց կենացն անտես չառնէ:

Ցայս ունիմք առ Տէրն ամենի
Որ ողորմի Հայոց ազգի.
Ով որ չարկամ եղեր մեզի՝
Անդ աճազին առեանն դատի:

Քահանայք և աշխարհական
Խնդրեմ ձեզնէ հառաչական,
Դարձէք մեղաց աղտեղական,
Լալով առէք ըզՏէր մեզան:

Եւ անարժանս մեղաց դերի
Մինաս անուն պարսաւելի,
Եւ եմ զարիպ Հայաստանի,
Թոխաթ անուն քաղաք կոչի:

Զայս դառն աղէտս աչօք տեսի
Այս Օլախաց փոքրիկ երկրի.
Փորձանք եկաւ Հայոց ազգի
Քահանայից, ժողովրդի.

Ցանգէտ մըտացս առաջ եկան
Եւ սակաւ ողբըս գրեցան. 4
Զձեզ աղաչեմ զամենեսեան,
Զիս յիշելոյ արէք արժան 5.

Մեղօքըս լի եմ անարժան,
Ոտից ձերոց լինիմ կոխան,
Զըխնայէք ըզՀայր մեզան,
Զսուրբ աղօթքըն տէրունեան.

Օրհնութիւն զուք սուք միաբան
Երրորդական աստուածութեան,
Որ զմեզ փրկէ ի յայլ ցասման
Այժմ և յաւէտ և այագայն:

1. Զեկեղեցոյ հիմըն:
2. Ուսուցիչ է:
3. Ի այլ մեծ մեծ:
4. Ցանգէտ մըտացս առաջ եկի
Եւ սակաւիկ ողբս ասացի:
5. Արէք արժանի: